



ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵՐԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՍՍԱԼԻՐ» ՊՈԱԿ

0064, Երևան, Բաֆֆու 57  
Raffy 57, Yerevan  
Ереван, ул. Раффи 57

(374 10) 74 72 46 (374 91) 43 10 99

«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF THE REPUBLIC OF ARMENIA  
ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ КОМПЛЕКС «МХИТАР СЕБАСТАЦИ» Министерства образования и науки РА

<https://www.facebook.com/mxitaar.sebastaci?fref=ts> [info@mskh.am](mailto:info@mskh.am) [www.mskh.am](http://www.mskh.am)

19-05-261

06.05.2019թ.

Հարգելի գործընկեր.

2019թ. մայիսի 13-17-ը Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում կազմակերպվում է հեղինակային կրթական ծրագրերով ամենամյա մայիսյան 14-րդ ստեղծագործական [հավաքը](#): Հավաքում կներկայացվեն հեղինակային կրթական ծրագրերի մշակման, կազմակերպման, տարածման 2018-2019 ուսումնական տարվա արդյունքները, 2019-2020 ուսումնական տարվա պատրաստությունը, Բլեյան կրթական բաց ցանցով գործընկերության զարգացումը: Ստեղծագործական հավաքի օրացույցով-աշխատակարգով նախատեսվում են մայիսի 13-16-ին բաց պարապմունքներ, կլոր սեղան-քննարկումներ, ցուցադրություններ, համերգներ, վերապատրաստումներ կրթահամալիրի մանկավարժական լաբորատորիաներում: Մայիսի 17-ին՝ հավաքի ամփոփումն է, հեղինակային կրթական ծրագրի, Բլեյան բաց ցանցի ներկայացումը՝

- 9:00-9:15՝ առավոտյան ժամերգություն Սուրբ Երրորդություն եկեղեցում
- 9:30-12:00՝ նախագծային, բլոգային ուսուցման բաց պարապմունքների ցուցադրություն կրթահամալիրի բանգլադեշում
- 12:00-12:45՝ ընդմիջում-հյուրասիրությունը որպես միասնական նախագիծ
- 13:00-14:00՝ հեղինակային կրթական ծրագրի, Բլեյան բաց ցանցի ներկայացում-շրջայց կրթահամալիրի բանգլադեշում
- 14:00-15:00՝ կլոր սեղան-հավաքի ամփոփում «Սեբաստիա» սրահում
- 15:15-16:00՝ ուրբաթ-համերգ:

Հավաքի նախապատրաստումը, ընթացքը կլուսաբանվեն [mskh.am](http://mskh.am)-ում, հավաքի, բաց ցանցի բլոգներում, մեթոդական մշակումները, տեսադասերը, ուսումնական փաթեթները՝ մանկավարժական «Դպիր» ամսագրում, մեդիագրադարանում: Հավաքի նյութերին, լուսաբանմանը կարող եք ծանոթանալ կրթահամալիրի [mskh.am](http://mskh.am) կայքում,

ուսումնական բլոգներում, սոցցանցում: Մասնակցության համար անհրաժեշտ է լրացնել [հայտը](https://forms.gle/2FFsXunbQfQSgVyE6) (https://forms.gle/2FFsXunbQfQSgVyE6):

ՀՀ մարզերից, Արցախից, Վրաստանից մասնակիցները կարող են օգտվել կրթահամալիրի կրթական փոխանակումների կացարաններից:

**Խնդրում ենք Ձեր տեղեկատվական, կազմակերպական աջակցությունը:**

**Հրավիրում ենք Ձեզ, Ձեր ներկայացուցիչներին՝ մասնակցելու հավաքի աշխատանքներին, պաշտոնական ներկայացմանը: Խնդրում ենք պատասխան նամակով, զանգով (հեռ.՝ 093 309 389, 091 431 099) հաստատել Ձեր մասնակցությունը:**

**ՀԱՐԳԱՆՔՈՎ՝**

**ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝**

**Ա. ԲԼԵՅԱՆ**